երգել էր, եւ մարդկանց թափորների հետ սարսափը լեռներ էր ճեղքել եւ անցել:

Մի օր էլ ռուսը եկել, ոտքը դրել էր երեքրող հողի վրայ: Խաչը վստահութիւն էր ներշնչել: Կանայք բացել էին իրենց երեսը, լուացել մուրը, որով ծածկում էին իրենց գեղեցկութիւնը, ու Շամախին վերսկսել էր հիւսել, իր թանկարժէք եւ նուրբ մետաքսների վրայ թռչունների երգը եւ ծաղիկների երանգը:

Մեր տունը, մանրանկարների գունաւորումներով զարդարուն, կանանց ոսկէ քանդակների հետ միասին պահել էր հաւաոր փըլուզումների յիշատակը:

Պարտէզի մէջ, կիսաքանդ պատեր, խոտերով ծածկուած հիմքեր կային, որոնք երկար պատմութիւններով կարող էին շատ գիշերներ լեցնել:

Տունը ձեռքէ ձեռք էր անցել:

Հայրս լեռներէն իջել էր, վերաշինել տունը, իր ձին կապել գոմում եւ սուրը — մեծ, կռացած արծաթէ մի սուր — կախել պատին, իր անկողնի վերեւ:

Կովկասը չունչ էր առնում: Հայութիւնը բազմել էր երեք սկզբունքների վրայ. ռուսը, եկեղեցին, դպրոցը:

Կիրակիները կամ տօներին, ռուսաց եկեղեցու առջեւ, երբ զօրանց էր տեղի ունենում, հայրս իր բոլոր շքանշանները կախած, ձեռքիցս բռնում էր, եւ զօրքերի մօտ կանգ առնում:

Իր ծննդեան օրին եպիսկոպոսի նախագահութեամբ ճաշ էր տալիս:

Զաւակները — ութ տարեկան հասակին— տանում էր Մոսկուա, Պետերբուրգ կամ Թիֆլիս: Սովորեցէ՛ք:

Ու ամէն ինչ այլեւս խաղաղ էր. բոլոր հարցերը, միանգամայն, իրենց լուծումը առել էին:

Ի զուր, բարեկամները առաջարկում էին ձրի հողեր, նոր զարդացող Բագուի մէջ: Ծերունին լսել իսկ չէր ուզում: Ի զուր, երկրաշարժային ցնցումներ վայր էին նետել տան տանիքը, քանդել երրորդ յարկը եւ ապագայ վտանգների սպառնացող ուրուականը մաս ածել:

Մարդը մնացել էր անսասան: Վերաշինել էր տանիքը, կարգաւորել պարտէզը եւ վարդենիներին ջուր տուել:

Եւ ահա, գլուխը ճերմակ լաթերով փաթթուած, վիրաւորուած ասպետի ծանր քայլերով, նա մաս էր դալիս սենեակից սենեակ եւ Իօդոֆորմի հոտ սփռում ամէն տեղ:

Ես վախում էի: Նախազգում էի մահը եւ փախչում պարտէզ:

* * *

Իր ննջարանը քառակուսի էր եւ մեծ: Լայն մահճակալ, պատի վրայ սուրը եւ զինուորականի կարմիր գլխարկ:

Մեռածների դեղնած լուսնկարներ: Հրսկայ մի բազկաթոռ եւ ընկուզենու լայնափոր մի պահարան:

Մենք այս սենեակը չէինք մտնում: Դուռը միշտ փակ էր: Հայրս ժամերով մնում էր այնտեղ մինակ, իր անցեալով, իր յիշատակներով եւ իր մահով:

Ամէն մարդ իր մահը տանում է իր մէջ: Կան նաեւ սենեակներ մահի համար պատրաստուած. անկիւններից քառակուսի շուքեր են իջնում, պատուհանի վարագոյրը ծանր է եւ մեծ, բազկաթոռը խոր է եւ ամէն ինչ համաչափ է:

Սենեակի դուռը մեծ էր եւ թոշնած, մութ կարմիր գոյն ունէր: Ամրոցի դռների նման տխուր էր եւ ծանր:

Եւ ահա —

Դուռը միշտ փակ է: Մառաները մտահոգ վազվզում են, դրսի զանգակը անդադար զօրանջում է՝ մարդիկ են գալիս, բժիշկ, զինուորական հիւանդանոցի ծառայողներ: Մայրը, ձեռքերը կրծքին սեղմած, գլուխը պատին է կրթնել: Մեծ եղբայրս լաց է լինում:

Դրան ետեւից բարձր խռպոտի ձայներ են գալիս: Օրհասականի մի խռպոտ, որ լեցնում է ամբողջ տունը, սողում պատերի վրայից, բախւում տանիքին, դուրս նետւում պատուհանից դէպի պարտէզ:

Պառկել եմ դրան առջեւ, բարձր հեկեկում եմ: Փոքրիկ ձեռքերս սեղմել եմ դրան վրայ, ուզում եմ բաց անել, յետ կանչել, մաքառել անխուսափելիի դէմ: Ցաղթել մահը տղայական քմահաճոյքով:

Դուռը փակ է: Մահը ներկայ է:

* * *

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան